

ՆՈՐԻԿ ՆՈՐԻԿՅԱՆ

ՀՀ փաստաբանների պալատի անդամ,
«Նորիկյան և գործընկերներ» փաստաբանական
գրասենյակի ղեկավար

ԶԻՆԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱԶԳ-ԲԱՆԱԿ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հոդվածում որոշակիորեն վերլուծության է ենթարկվել «ԱԶԳ-ԲԱՆԱԿ» հայեցակարգը, որի արդյունքում առաջարկվել են որոշակի փոփոխություններ կատարել գործող օրենսդրության մեջ:

Բացի այդ, համեմատական վերլուծության ենթարկելով Իրանի, Իսրայելի, Ռուսաստանի և Վրաստանի զինված ուժերի պահեստագորային համակարգերը՝ հոդվածով առաջարկվում է գործող զինված ուժերին զուգահեռ ստեղծել պահեստագորային բանակ, որի հիմնական նպատակը երկրի անվտանգության ու պաշտպանական համակարգի անխափան գործունեության ապահովումն է:

Հիմնարարը- Ազգ-բանակ, պահեստագորային բանակ, զինապարտություն, պաշտպանական համակարգ, անվտանգություն, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք:

ՀՀ զինված ուժերի կազմավորումից հետո մինչև օրս տարբեր հարթակներում չի դադարում այն բանավեճը, թե այնուամենայնիվ, Հայաստանի զինված ուժերի ապագան արդյո՞ք պրոֆեսիոնալ բանակը չէ, արդյո՞ք պարտադիր զորակոչային ռեսուրսով հնարավոր է կառուցել այնպիսի մարտունակ բանակ ու պաշտպանական համակարգ, որը կարող է չեզոքացնել ցանկացած արտաքին ռազմական ագրեսիա:

Մեր խորին համոզմամբ, ՀՀ զինված ուժերի հետագա զարգացման ուղեգիծը պայմանավորված կլինի այն հանգամանքից, թե առաջիկա տարիների ընթացքում ինչպիսի աշխարհաքաղաքական և ռազմաքաղաքական զարգացումներ տեղի կունենան մեր տարածաշրջանում:

2016թ. հոկտեմբերի 29-ին ՀՀ պաշտպանության նախարարին կից կոլեգիայի նիստի ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարը հրապարակում է իր պատկերացրած «ԱԶԳ-ԲԱՆԱԿ» ռազմավարական գաղափարի տեսլականը¹, որի հիման վրա դրան հաջորդող ժամանակահատվածում իրականացվում են արմատական փոփոխություններ զինապարտության և զինվորական ծառայության կազմակերպման գործընթացի իրավակարգավորման ոլորտում:

Ըստ հրապարակված տեսլականի առանձին դրույթների, որոնք աղերսվում են սույն հոդվածի հետ, ազգ-բանակն անհամեմատ ավելին է, քան ազգային բանակը: Քանի որ ազգային բանակը ծառայում է ազգին, իսկ ազգ-բանակը՝ հենց ինքն ազգն է:

Հայեցակարգի հեղինակի կարծիքով ազգ-բանակը դա այն հասարակությունն է, որը գործում է

որպես մեկ միասնություն: Դա չի նշանակում հասարակության կամ պետության ռազմականացում: Ծիշտ հակառակը, նշանակում է բանակի ժողովրդավարացում, լիարժեք ինտեգրում հասարակության, տնտեսության, մշակույթի, կրթության և գիտության, բնապահպանության, սպորտի բնագավառներ: Դա նշանակում է բանակի ստեղծածն ու ձևավորածը ծառայեցնել ողջ հասարակությանն ու պետությանը, իսկ քաղաքացիական կյանքի բոլոր ձեռքբերումներով ամրապնդել երկրի զինված ուժերը:

Ազգ-բանակը դա այն երկիրն է, ուր չկա զինվորական և քաղաքացիական, այլ կա համազգեստով քաղաքացի և կա քաղաքացիական հանդերձանքով հայրենիքի պաշտպան:

Հեղինակը գտնում է, որ մենք դեռ երկար ենք ունենալու մեր հնարավորությունների համեմատ անհամաչափ մեծ զինված ուժեր պահելու անհրաժեշտություն:

2017թ. ապրիլի 18-ին ռազմակրթական ոլորտի հիմնախնդիրներին նվիրված «Ազգ-բանակ-2017» խորագրով համաժողովի ընթացքում² պաշտպանության նախարարը հայտարարում է, որ «Ազգ-բանակ» հայեցակարգի ներքո դրվել են երկու նոր նախագիծ՝ «Պատիվ ունեն» և «Ես եմ»:

Նշված հայեցակարգերի հիման վրա 2017թ. մշակվեց նոր՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որն անցավ բավականին բուռն քննարկումների փուլ, և ի վերջո ընդունվեց Ազգային Ժողովի կողմից և մտավ օրինական ուժի մեջ³:

Բացի այդ, ՀՀ նախագահի 2018թ. փետրվարի 17-ի թիվ ՆՀ-103-Ա հրամանագրով հաստատվում է

www.journal.lawinstitute.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ զինված ուժերի 2018-2024թթ. արդիականացման ծրագիրը⁴, որի հիմնական դրույթները, մեր կարծիքով, բխում են ազգ-բանակ հայեցակարգից:

Հասարակական տրամադրությունների և բանակի նկատմամբ տարիների ընթացքում ձևավորված կարծիքների ու տեսակետների համառոտ ու հպանցիկ վերլուծությունը ցույց է տալիս, որ մեր հասարակությունը և նրա առանձին սոցիալական խմբեր ոչ լիարժեք պատկերացում ունեն կամ առհասարակ չունեն բանակային կյանքի, զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների, նրա զարգացման դինամիկայի և առհասարակ զինված ուժերի ղեկավարման և գործերում տիրող իրական վիճակի մասին:

Բանակում իսկապես կային և կան խորքային բնույթ կրող հիմնախնդիրներ, որոնց լուծումը կարող է տրվել միայն համընդհանուր ջանքերի համադրման միջոցով:

Այդուհանդերձ, տարիներ շարունակ հասարակական սեկտորի քննադատությունների բովանդակության շրջանակը եղել է սահմանափակ և ունեցել առանցքային մի քանի ուղղվածություն.

- բանակում տիրում է անպատժելիության մթնոլորտ, առկա է բարոյալքվածության էական մակարդակ,
 - վտանգված է զինձառայողների կյանքի իրավունքը, վերջիններս շոշափելիորեն գտնվում են անպաշտպան վիճակում,
 - բացակայում է մարդու՝ որպես բարձրագույն արժեքի նկատմամբ սրտացավությունը, հարգանքը և իրավունքների պաշտպանության համակարգը,
 - զինված ուժերը թաղված են կոռուպցիայի մեջ, բանակի հրամանատարական կազմը ներգրավված է բիզնես գործունեության տիրույթում,
 - զինված ուժերում առկա է գեներալական «Բեսայրեդել», հովանավորչությունը, սոցիալական անարդարությունը խարխլում է կանոնադրական հարաբերություններն ու բանակի հիմքերը, սպաների և զինվորների մեջ գերիշխում է վստահության դեֆիցիտը,
 - բանակը փակ համակարգ է, որտեղ գերիշխում են գողական բարքեր, կանոնադրական հարաբերությունները ստորադասված են չգրված նեգատիվ սկզբունքներին,
 - հետաքննություն և նախաքննություն իրականացնող մարմինները կոծկում են հանցագործությունները և իրական հանցագործներին,
 - կասկածի տակ է դրված բանակի ղեկավարության հեղինակությունը, խաթարված է զինված ուժերի վարկանիշը:
- Թեև այս ամենին, մինչև 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմը, զինված ուժերի նկատմամբ

ունեցած ընկալումը մեծ հաշվով դիտարկվում էր 1990-ական թվականներին տարած հաղթանակի համատեքստում:

Քառօրյա պատերազմից հետո թե՛ երկրի ռազմաքաղաքական ղեկավարությունը, և թե՛ հասարակությունը միանգամից սթափվեց՝ անմիջապես գիտակցելով, որ անցած ժամանակը փոխել է ամեն ինչ՝ թե՛ հակառակորդին, թե՛ նրա հնարավորությունները, թե՛ Արցախյան հակամարտության նկատմամբ ունեցած պատկերացումները:

Միևնույն ժամանակ, գիտակցվեց, որ մեր պատկերացումները բանակի և պետության պաշտպանական համակարգի, ինչպես նաև զոյություն ունեցող առկա մարտահրավերների վերաբերյալ շատ դեպքերում մնացել են Արցախյան պատերազմի հաղթանակի իներցիայի ստվերում:

Այս պայմաններում ակնհայտ էր, որ անհրաժեշտ էր բանակը նորովի վերակազմակերպելու, առկա մարտահրավերներին համարժեք արձագանքելու և արդի պահանջներից բխող պաշտպանական համակարգ ստեղծելու համար գործադրել նորովի մոտեցումներ ու ներդնել նոր գործիքակազմեր, որոնց գործադրման արդյուքնում կձևավորվեր այնպիսի պաշտպանական համակարգ, որն առաջիկա տարիների համար կդառնար պետության անվտանգության և տարածքային ամբողջականության ապահովման ամենակարևոր երաշխավորը:

Մեր պատկերացմամբ ազգ-բանակ հայեցակարգի ամենաառանցքային և ռացիոնալ գործիքներից մեկը կարող է դառնալ զինված ուժերի պահեստազորային ռեսուրսի մշտապես մարտունակ պահելուն ուղղված իրական քայլերի ամրագրումն ու իրագործումը:

Այլ կերպ ասած, Հայաստանի առջև ծառայած արտաքին հնարավոր ռազմական մարտահրավերների հանգամանքը ստիպում է ունենալ «Երկու» բանակ՝ գործող՝ պարտադիր ու ժամանակի ընթացքում դեպի պրոֆեսիոնալ բանակի վերածվող զինված ուժեր և պահեստազորային⁵ բանակ: 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմի ընթացքը ցույց տվեց, որ հազարավոր կամավորներ հանպատրաստի ցանկություն հայտնեցին և մեկնեցին սահմանագիծ և տևական ժամանակ իրականացրեցին, ըստ էության, մարտական հերթապահություն:

Բացի այդ, Արցախի համար ստեղծված այդ ծանր իրավիճակում հազարավոր հայրենակիցներ Արցախից, ՀՀ-ից և Մփյուռքից, ինքնաբուխ կերպով այցելում էին հայ զինվորներին՝ իրենց հետ տանելով առաջին անհրաժեշտության տարբեր տեսակի ապրանքներ՝ սնունդ, հագուստեղեն և կենցաղային պարագաներ, պատրաստակամություն հայտնում

www.journal.lawinstitute.am

իրենց հնարավորությունների չափով աջակցելու և օգնություն ցուցաբերելու Արցախին⁶ : Սա խոսում է այն մասին, որ անհրաժեշտ է ոչ միայն ձևավորել անհրաժեշտ իրավական հիմքեր, այլ ձեռնարկել գործուն միջոցներ՝ պահեստագործային բանակը «կենսունակ» և մշտապես մարտունակ պահելու համար:

Քառօրյա պատերազմը ցույց տվեց, որ ճգնաժամային և արտակարգ իրավիճակներում, երբ երկիրը հայտնվում է ռազմական ագրեսիայի թիրախում, պատկերավոր ասված՝ «հասարակ մարդկանցից կազմված բանակը» կարող է բեկել ռազմաճակատի դրությունը:

Բայց սրանով հանդերձ, բոլորը գիտակցում են, որ արդի ժամանակաշրջանում, անսալ ու ասավիճել բացառապես հախուռն, երբեմն անկազմակերպ, ինքնաբուխ կամավորականության թեկուզև իրապես հարգանքի արժանի մտայնությանը, չի կարելի, քանի որ որևէ զինված ուժերում ուղղակիորեն հակացուցված է անկազմակերպվածությունը, ռեսուրսների սխալ բաշխումը, լոկալ ստորաբաժանումների ինքնաբուխ դեկավարումը, ինչը կարող է հանգեցնել ընդհանրապես պաշտպանական համակարգի ամբողջական փլուզմանը:

Ակնհայտ է, որ անհրաժեշտ է այս ամենը կազմակերպել ինստիտուցիոնալ հիմքի վրա, ստեղծել գործող ու գործունակ համակարգ՝ հիմնված բացառապես իրավական հիմքերի վրա:

Թեև ֆորմալ առումով օրենսդրական կարգավորման միջոցով ամրագրվել է պահեստագործում գտնվող ռեսուրսի օգտագործման կարգն ու պայմանները, այդուհանդերձ, ակնհայտ է, որ այն կոնկրետ իրավիճակում և ըստ անհրաժեշտության, չգործեց, և չունեցավ այն առաքելությունը, որին միտված էր, որպիսի պայմաններում, մեր խորին համոզմամբ, բոլորովին նոր մոտեցում է անհրաժեշտ պահեստագործի ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու համար:

Այս առումով առանձնահատուկ ուշադրության արժանի է Իրանի զինապարտության համակարգը:

Իհ՛՛հ ՉՈՒ փաստացի ծառայության կամ պահեստի զինծառայողները բաժանված են չորս կատեգորիաների՝ կանոնավոր ժամկետային ծառայության զինծառայողներ և պահեստի զինծառայողներ (ոչ մշտական զինծառայողներ), կանոնավոր (մշտական) զինծառայողներ, պայմանագրային պրոֆեսիոնալ զինվորներ, «Բասիջ» (դիմադրության ուժեր):

Ընդհանուր զինապարտության մասին օրենքի համաձայն՝ գորակոչված անձանց զինվորական ծառայությունը ներառում է ծառայության ակտիվ

ժամկետ և պահեստային ծառայություն ու կազմակերպվում է բոլոր տեսակի զինված ուժերի համար միասնական սխեմայով: Չինակոչի ընդհանուր տևողությունը 30 տարի է, որը բաժանված է հետևյալ փուլերի.

- կանոնավոր ծառայություն՝ 20 ամիս (ԱԳ-Ա պաշտպանության խորհուրդը իր որոշմամբ կարող է կրճատել այդ ժամկետը մինչև 17 ամիս),
- պահեստային կազմում գրանցվելը՝ 8 տարի,
- առաջին գծի պահեստային կազմում՝ 10 տարի,
- երկրորդ գծի պահեստային կազմում՝ 10 տարի⁷:

Իհ՛՛հ զինված ուժերի զինծառայողները ժամկետային զինվորական ծառայության փաստացի ավարտից հետո զինապարտ տղամարդիկ կցագրվում են ռազմական ուժերի կոնկրետ տեսակի գորահավաքային պահեստագործում, հաշվառվում են կոնկրետ դիվիզիաներում և ժամանակ առ ժամանակ կանչվում են վարժանքային հավաքների⁸:

Էլ ավելի ուշադրության արժանի է Իսրայելի մոտեցումները քննարկման առարկա հանդիսացող հարցի կապակցությամբ:

Այդ պետության զորահավաքային հնարավորությունների անհամաչափությունը՝ իր հարևանների հետ համեմատած, այդ երկրի առաջնորդներին դրդել է առավելագույնի հասցնելու երկրի ռեսուրսները՝ խաղաղ և պատերազմական ժամանակներում համընդհանուր զինապարտության միջոցով:

Այդ քաղաքականության շնորհիվ և ի տարբերություն ժամանակակից արևմտյան բանակի մոդելի՝ Իսրայելի մեծաթիվ բանակի հիմնական մասը կազմված է զինապարտներից:

Իսաղաղ ժամանակ Իսրայելի ցամաքային ուժերում կանոնավոր ծառայության զինապարտների բաժինը 80% է: Թեպետ Իսրայելի զինված ուժերը հիմնականում կազմված է զինապարտներից և գորակոչված պահեստագործայիններից, սակայն այն իրավացիորեն համարվում է աշխարհի լավագույն բանակներից մեկը և լավագույնը Իսրայելի մեծության երկրների համար:

Դա հստակորեն ցույց է տալիս, թե որքան արդյունավետ կարող է լինել զինապարտներից կազմված բանակը պատշաճ կազմակերպվածության դեպքում⁹:

Ըստ Global Fire Power.com կայքի վարկանիշի ռազմական ներուժով Հայաստանը 95-րդ երկիրն է, իսկ Իսրայելը՝ 15-րդ, Իսրայելն ակտիվ զինուժով Հայաստանին գերազանցում է 2,3 անգամ, իսկ պահեստագործով՝ 3 անգամ: Չինծառայությանը պիտանի անձանց թվով Հայաստանը զիջում է 2,1 անգամ: Իսրայելի պաշտպանության նախարար-

րության բյուջեն 69 անգամ ավելի մեծ է¹⁰ :

Իսրայելական բանակն ունի համեմատաբար փոքր թվով կադրային զինծառայողներ և կազմված է գերազանցապես շտապ ծառայության զինծառայողներից և պահեստագործից (կադրային զինծառայողների թիվը մեծ է ՌՄՈՒ-ում և ՌԾՈՒ-ում): Այդ պատճառով Իսրայելի ռազմական ուժերը, ի տարբերություն ուրիշ բանակների մեծամասնության, իրենցից չեն ներկայացվում ներփակված արհեստավարժ միավորում, այլ բառի բուն իմաստով հանդիսանում է համազգային բանակ¹¹ :

Աստիճանաբար այլ պետությունների կողմից էլ ավելի մեծ նշանակություն է տրվում պահեստագործային բանակի ձևավորմանն ու կայացմանը:

2016թ. Ուկրաինայի Ջինված ուժերի գլխավոր շտաբը օպերատիվ պահեստագործ է ստեղծել՝ բաղկացած 85 հազար մարդուց, ովքեր ռազմական գործողություններում մասնակցելու փորձ ունեն¹² :

2018-ից Վրաստանում կգործարկվի զինվորական պահեստագործի նոր համակարգի պիլոտային ծրագիր: Այն ենթադրում է երեք բաղադրիչների առկայություն՝ բանակային, տարածաշրջանային և մասնագետների ռեզերվ:

Բանակային ռեզերվը համարվելու է որակավորված պահեստագործով, որը պետք է առավելագույնս համապատասխանի զինված ուժերի անձնակազմին: Պահեստագործում ներգրավվելու են ոչ ավելի քան 5 տարի առաջ պայմանագրային և սպայական զինծառայությունը թողած անձինք, ինչպես նաև ավելի քան 5 տարի առաջ ծառայությունը լքած քաղաքացիները, եթե նրանց ֆիզիկական կարգավիճակը համապատասխանում է չափանիշներին և եթե այդ կոնկրետ ոլորտում մասնագետների պակաս կա:

Տարածքային ռեզերվին են ներգրավվելու զինված ուժերի շարքում պարտադիր զինծառայություն անցած, կադրային կամ պայմանագրային ծառայությունը ավելի քան 5 տարի առաջ թողած քաղաքացիները: Երկու տեսակի պահեստագործի ձևերի միջև իրավիճակից կախված կգործի ռոտացիայի տարբեր սկզբունք: Տարածքային ռեզերվի շարքերում կներգրավվեն նաև պարտադիր զինծառայություն չանցած քաղաքացիները:

Մասնագետների ռեզերվը համարվելու է որակավորում ունեցող քաղաքացիներով, ովքեր անհրաժեշտ կլինեն մոբիլիզացիայի կազմակերպման և անցկացման համար: Հաշվառման մեջ կլինեն նաև զինված ուժերում ծառայություն անցած բոլոր քաղաքացիները, նրանք կկանչվեն արտակարգ անհրաժեշտության դեպքում կամ կամավոր սկզբունքով¹³ :

Վերը նշված հանգամանքների համակողմանի վերլուծությունը ցույց է տալիս, որ պահեստագործային բանակները ժամանակի ընթացքում էլ ավելի կկարևորվեն և պետությունների անվտանգության ապահովման գործում կունենան առանցքային դերակատարություն:

Այս պայմաններում և այն իրավիճակում, որում գտնվում է Հայաստանը, մեր կարծիքով, չունի այլ տարբերակ, քան արդյունավետ ու գործունյա պահեստագործային բանակի ստեղծումը:

Մեր պայմաններում կարող է աշխատել պահեստագործային բանակի երկու մոդել.

ՀՀ զինված ուժերի գործող կառուցվածքի նույնությամբ ստեղծել պահեստագործային զինված ուժեր և ըստ ստորաբաժանումների ամրակցել զինված ուժերի գործող ստորաբաժանումներին:

ՀՀ զինված ուժերի գործող ստորաբաժանումներից գորացրված յուրաքանչյուր զինծառայողի (ըստ իր զբաղեցրած հաստիքի) հաշվառել նույն գործառնաում ստեղծված պահեստագործային ստորաբաժանմանը:

Պահեստագործային բանակ ստեղծելու հիմնական նպատակը երկրի անվտանգության ու պաշտպանական համակարգի անխափան գործունեության ապահովումն է:

Այդ խնդրի իրականացման համար ամենից առաջ անհրաժեշտ է ստեղծել դրական ու ընդգծված հարգալից վերաբերմունք զինված ուժերում ծառայելու նկատմամբ և ճիշտ հակառակը՝ հավասարազոր անհանդուրժողական վարքագիծ ձևավորել բոլոր դասալիքների նկատմամբ և ստեղծել այնպիսի իրավակարգավորումների համակարգ, որը կբացառի մի դեպքում դասալքության և զինապարտությունից խուսափելու օրենսդրական «սողանցքները», մյուս դեպքում անխուսափելի կդարձնի քրեական պատասխանատվության ենթարկվելու անխուսափելիության սկզբունքը:

Ինչ խոսք, ՀՀ զինված ուժերի ապագան մեր խորին համոզմամբ իրական պրոֆեսիանալ բանակի ստեղծումն է, այդուհանդերձ, քանի դեռ այն չի ստեղծվել, պետք է առկա ռեսուրսների օգտագործմամբ ստեղծել պահեստագործային բանակը, որը կապահովի վերը նշված խնդիրների լուծումը:

Պահեստագործային բանակի անձնակազմը, ըստ էության, ունենալու է մի շարք առավելություններ:

Ամենից առաջ, այդ անձնակազմն արդեն իսկ անցել է պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն, ինչը նշանակում է, որ նրանք ունեն որոշակի զինվորական գիտելիքներ, ինչը շատ էական նշանակություն կունենա պրոֆեսիոնալ զինծառայողի ձևավորման գործում:

Բացի այդ, այս կոնտինգենտի մշտական կապի ստեղծումը գործող բանակի հետ, կդառնա այն անհրաժեշտ հիմքը, որի հիման վրա վերջնաարդյունքում կձևավորվի հասարակ մարդուց պրոֆեսիոնալ զինվորականի վերածելու դպրոցը:

Պահեստագորային բանակում կարող են ընդգրկվել պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից առնվազն 5 տարի առաջ գորացրված քաղաքացիները:

Պահեստագորային բանակում գտնվելու ժամկետը անհրաժեշտ է սահմանել 5 տարի, որից հետո, նշված անձնակազմը կհամարվի պահեստագորի առաջին խմբում, իսկ 10 տարի հետո՝ պահեստագորի 2-րդ խմբում:

Մեր կարծիքով, ներկայացված առաջարկը կարող է արդյունավետ լինել հետևյալ պատճառաբանությամբ.

Արդի ժողովրդագրական ոչ բավարար արդյունքների պայմաններում տարեց տարի նվազում է զորակոչային ռեսուրսը, որպիսի պայմաններում հրատապ է դառնում ստեղծել պարտադիր ժամկետային զինվորական ծառայությանն ալլընտրանքային միջոց, որն անհրաժեշտության դեպքում կապահովի պետության ու հասարակության անվտանգությունը, և կիրականացնի այն առաքելությունը, որը միտված կլինի պետության անվտանգության ապահովմանը:

Հաշվի առնելով առկա գործազրկության բարձր մակարդակը՝ պահեստագորային բանակում գտնվելու ընթացքում անձնակազմը կստանա որոշակի վարձատրություն, ինչը որոշակիորեն կմեղմի այդ անձանց սոցիալական ծանր վիճակը:

Ընդգրկված լինելով պահեստագորային բանակում՝ որոշ չափով կկանխվի այդ անձնակազմի արտագաղթը, ավելին, չբացառելով հանդերձ, որ այդ երիտասարդներից մի մասը կարող է անցնել պայմանագրային զինվորական ծառայության գործող բանակում, առհասարակ նրանց արտագաղթելու խնդիրը կհասնի նվազագույն հնարավորության:

Գործող զինված ուժերի յուրաքանչյուր զինծառայող կզիտակցի, որ ունի իրեն փոխարինող կամ անհրաժեշտ պահին իր առջև դրված խնդիրների իրականացման ընթացքում իրեն համարող անձնակազմ, ինչը բարոյահոգեբանական առումով կարող է դրական նշանակություն ունենալ անգամ մարտական պատրաստականության վիճակի բարձրացման տեսանկյունից:

Երկրում էականորեն կփոխվի զինված ուժերի համալրման փիլիսոփայությունը, ինչը կարող է առանցքային ազդեցություն ունենալ անգամ կոռուպցիոն ռիսկերի նվազեցման առումով:

Հասարակական ընկալման առումով արմատապես կվերանայվի զինծառայողի կերպարը, նրա առաքելության իմաստը, յուրաքանչյուր ոք կզիտակցի, որ հայրենիքի պաշտպանության ու անվտանգության խնդիրը յուրաքանչյուրի անձնական պատասխանատվության հարցն է:

Պրոֆեսիոնալ զինվորական գործունեությամբ զբաղվելը ձեռք կբերի էլ ավելի մեծ հեղինակություն, որն էլ իր հերթին կնպաստի հայրենիքի պաշտպանության գաղափարի ամրապնդմանը:

Մրանով հանդերձ, կարծում ենք, որ պահեստագորային բանակի իրական գոյության և անհրաժեշտ կենսագործունեության համար առանցքային նշանակություն ունի դրա հիմքում սոցիալական երաշխիքների համակարգի առկայությունը, որը լրացուցիչ խթան կհանդիսանա համակարգի կայացման և բնական գործունեության ապահովման տեսանկյունից:

Պահեստագորային բանակում գտնվող յուրաքանչյուր ոք պետք է ապահովված լինի համազգեստով և զինվորական այլ անհրաժեշտ պարագաներով:

Համապատասխան վարժական հավաքների ընթացքում անձնակազմը պետք է ստանա համապատասխան վարձատրություն, և օգտվի զինծառայության համար սահմանված բոլոր արտոնություններից:

Անձնակազմի վերապատրաստման, վարժական հավաքների, պահեստագորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումների, զինվորական վարժանքների (հրամանատարաշտաբային կամ շտաբային, զինվորական մարզումների) և զորավարությունների (զորախաղերի) կանչելու կարգն ու ժամկետները կիրականացվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հասկանալի է, որ քննարկման առարկա դարձած այս առաջարկը պետք է ենթարկվի մանրակրկիտ մասնագիտական ուսումնասիրության, որպիսի պայմաններում պետք է իրականացվեն պրոֆեսիոնալ հաշվարկներ, կատարվեն համեմատական վերլուծություններ, ինչպես նաև միջազգային փորձի ուսումնասիրություն:

Էականն այստեղ գործող բանակին զուգահեռ պահեստագորային բանակի ստեղծումն է, որը անհրաժեշտ պահին կապահովի պետության անվտանգությունն ու տարածքային ամբողջականությունը:

¹ <http://www.mil.am/hy/news/4466>² <http://www.mil.am/hy/news/4728>³ <http://www.arlis.am/>⁴ <http://www.president.am/hy/decrees/item/4398/>⁵ https://hy.wikipedia.org/wiki/%D5%94%D5%A1%D5%BC%D6%85%D6%80%D5%B5%D5%A1_%D5%BA%D5%A1%D5%BF%D5%A5%D6%80%D5%A1%D5%A6%D5%B4⁶ http://www.noravank.am/img/detail.php?ELEMENT_ID=14725⁷ Տե՛ս, Ֆիլիպ Ֆլուրի, Վալենտին Բաղրակ «Հետազոտությունն զինապարտության կարգերի մասին. Խորվաթիա, Իսրայել, Իրան և Ուկրաինա», ԺՆՆ-Երևան-2016թ. 28-րդ էջ:⁸ Տե՛ս, Ֆիլիպ Ֆլուրի, Վալենտին Բաղրակ «Հետազոտությունն զինապարտության կարգերի մասին. Խորվաթիա, Իսրայել, Իրան և Ուկրաինա», ԺՆՆ-Երևան-2016թ. 29-րդ էջ:⁹ Տե՛ս, Ֆիլիպ Ֆլուրի, Վալենտին Բաղրակ «Հետազոտությունն զինապարտության կարգերի մասին. Խորվաթիա, Իսրայել, Իրան և Ուկրաինա», ԺՆՆ-Երևան-2016թ. 11-րդ էջ:¹⁰ <http://geopolitics.am/archives/12890>¹¹ <http://vardan22.livejournal.com/15524.html>¹² <http://operativ.am/?p=189785&l=am>¹³ <https://razm.info/115409>

Норик Норикян

Член палаты адвокатов РА,
руководитель адвокатского бюро
«Норикян и партнеры»

РЕЗЮМЕ

Ключевые вопросы военной службы в контексте концепта Нация-Армия

В статье рассматриваются существующие вопросы военной службы в Республике Армения, поправки в военном законодательстве и предлагаются несколько возможных решений. Проанализирован концепт Нация-Армия, законодательные изменения, сделанные на его основе, в частности нормы закона РА «О военной службе и статуса военнослужащего». Кроме того, сравнивая системы резервной армии вооруженных сил Ирана, Израиля, Украины и Грузии, автор подчеркивает важность создания резервной армии параллельно с существующими вооруженными силами. Главной целью этой армии должно быть обеспечение безопасности страны и бесперебойной деятельности системы обороны.

Ключевые слова: Нация армия, Резервная армия, Военная служба, Оборонительная система, безопасность, Закон РА о военном положении и военном статусе.

Norik Norikyan

Member of the Chamber of Advocates of RA,
Head of “Norikyan and Partners” Law Office

SUMMARY

Present Issues of Military Service in the Context of Nation-Army

In the article the present issues of military service in the Republic of Armenia and regulations in the military legislation are discussed and several possible solutions are suggested. The “Nation-Army” concept has been analyzed as well as legislative changes done on its bases, particularly the norms of the RA law “Military service and state of the soldier”. According to the research the author suggests to make some changes in the present legislation.

Moreover, making comparative analyzes in the reserve army systems of the military arms of Iran, Israel, Ukraine and Georgia the author considers important to create reserve army parallel to present military arms. The main purpose of that army must be to ensure the uninterrupted activity of the defense and security system of the country.

Key words: National-army, Reservation army, Military service, Defense System, Security, RA Law on military service and status of the armed forces.